

ծինս եւ յաշխարհս, եւ ի քակտելն եւ ի պառակտելն¹՝ զվնաս եւ զկորուստ յանծինս եւ յաշխարհս²:

2 Որում երկրորդ գրոցն անուանեն զոմն պատմագիր, կոչեցեալ Փաւստոս³ Բուզանդացի. եւ վասն զի կարգելոցն առ ի նմանե⁴ ի տեղիս ուրեք կարծեցին ոմանք բանք ինչ ոչ յարմարք եւ դիպողք, որպէս առաջնոյն ճշգրտաբանութիւն⁵, Ագաթանգեղոսն կոչեցելոյ՝ յերկուացեալ հարկաւորին չասել զայնպիսի անպատշաճ կարգումն բիւզանդացւոյ⁶ ուսելոյ: 3 Զանգի Բիւզանդիոսս այս փոքրիկ քաղաքիկ էր, յառաջագոյն շինեալ յառնէ ումեմնէ Բիւզաս անուն կոչեցելոյ, մերձակայ Թրակացւոց սահմանակցութեանն. զոր եւ ի գալն աստուածակամ հրամանով սրբոյն Կոստանդիանոսի ի վերայ անթիւ բազմութեանն Գթաց⁷ ի պատերազմ, եւ առ եզերքն Ղեկովք գետոյ աւարեալ զհւր զաւրու բանակատեղս, որ եւ⁸ աստուածային տեսչութեանն լինէր արժանի, աւրինակեալ նմա յայտնապէս յերկնից աստեղեայ լուսատեսիկ⁹ նշան կենսատու խաչին, բերելով շուրջ զինքեամբ ճառագայթից նշանագիրս, թէ «այսու յաղթեսցես». եւ նորա զարթուցեալ՝ յուսով¹⁰ երեւեցելոյ նմա սուրբ նշանին աւզնականութեան¹¹ յաղթեալ վաներ զթշնամեացն բանակսն, եւ իսնդիր փութապէս գիւտիս այսմ հոգացեալ՝ ճեպով¹² զհւր մայրն զերանելին Յեղինէ յերուսաղէմ առաքել: 4 եւ թէ ո՛րպէս անդ ի ձեռն ջերմ իսնդորոյ սրբոյ մարդոյն յայտնեցաւ կենաց փայտն՝ զիտէ ամենայն անձն, ի նորին գրոց տեղեկացեալ զգիւտ փրկութեան մերոյ:

5 եւ ինքն թագաւորն եկեալ ի յառաջագրեալ քաղաքիկն, որ անուանեալ կոչէր Բիւզանդիոս¹³, եւ տեսեալ զսքանչելատեսիլ զամրութիւն տեղւոյն, թեպէտ եւ ծանրագոյն եւ բազում աշխատութիւն ի տեղւոյն ցուցանիւր՝ ոչ ինչ վեհերէր վասն աւգտակարութեան կղզւոյն. վասն զի շրջափակեալ յամենայն կողմանց՝ ծովածիր էր տեղին, բայց խուն ինչ ցամաքայատակ ճանապարհ, առանց շրջագայութեանց ջրոցն, որ ելանէր յարեւմուտս կոյս կաղա-

1 *Ձ. նախ՝ երեւի ի քակտելն եւ ի պառակտելն. ապա՝ ջնջած ե-երի վրայ գրուած են ի-եր. SS. ի քակտիլն եւ ի պառակտիլն*

2 *Ն. Բ. այստեղ ենթադրում է պակասորդ:*

3 *SS. Փոստոս*

4 *Ձ. առ ի նմանեն*

5 *SS. ճշմարտութիւն*

6 *Ձ. նախ՝ բուզանդացւոյ, յետոյ ուղղած այսպէս*

7 *Ձ. զգաց*

8 *ԲԳտ. որ աստուածային. թերեւս՝ ուր եւ (Ն. Բ.)*

9 *Ձ. աստեղա լուսատեսիկ*

10 *Ատ. եւ յուսով*

11 *Ձ. օգնականութեամբ Ն. Բ. այստեղ ենթադրում է պակասորդ:*

12 *Ձ. այսմ առնել ճեպով. թերեւս՝ առնել հոգացեալ՝ ճեպով*

13 *Ձ. բուզանդիոս*